



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

թիւ 16.

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ ԱԶԳԱՅԻՆ ՊԱՏՐԻԱՐԲԱՐԱՆԻ

ԱՏԵՆԱԳՐՈՒԹԻՒՆՔ
ԱԶԳԱՅԻՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎՈՅ

ԲԱՅՈՒՄ 1870 ՉՄԻՆ

ՆԻՍՏ ՎԵՇՏԱՍԱՆՆԵՐՈՐԳ

15 ՅՈՒՆԻՍԻՍ 1871



ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Յ. ՄԻԻԿԷՆՏԻՍԵԱՆ

— 1870 —

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎ

ԲԱՅՈՒՄ 1870 ԱՄԻՆ

Ն Ի Ս Տ ԺՁ .

15 ՅՈՒՆՎԱՐ 1871 .

ՍԱՄԳՅԱՆ . — ՍՐԲԱԶԱՆ ՊԱՏՐԻԱՐԿ

ԱՏԵՆԱՊԵՏ . — Ս . ԱՂԱՐԷԿԵԱՆ ԷՖ . (Փոխատենապետ)

ԿԱՐԳ ԽՆԴՐՈՅ

1. Ատենագրութիւնք Ը . Թ . Ժ . ԺԱ . եւ ԺԲ . նիստերուն :
2. Գլխական բարեկարգութիւն :
3. Վերաքննութիւն Սահմ . — Գլուխ թաղական մատակարարութեան :
4. Ներքին կանոնադրութիւն Ընդհ . Ժողովին , կամ Ատենական կանոնք :

Ատենար բացվեցաւ ժամ 7ին ի ներկայութեան 34 երեսփոխանաց :

Խնդրոց կարգին դեռ չանցած՝ Ատենապետ էֆ . Ինչ ինչ ներքին խնդրոց վերաբերեալ մէկ քանի գրութիւն ներկայացուց , որք ժողովոյ անօրինութեան կը կարօտէին :

Առաջին՝ Քասրմ բաշայի թաղին կողմէն երեսփոխան ընտրված Թորոս Գիսակ պէյ ժողովոյ նիստերէն առանց օրինական պատճառի յաջորդաբար երեք անգամ բացակայ գտվելով ժողովին որոշմամբ հրաժարեալ հրատարակվեր եւ Նախագահ Սրբազանի կողմէ երեսփոխանական կրկին ընտրութեան հրահանգ ուղղվեր է նոյն թաղին : Տեղւոյն Ընտրողական ժողովն ի պատասխան սոյն հրահանգին՝ յատուկ յայտագրով մը իւր քննութեան արդեանց համեմատ կը յայտնէր թէ Թորոս պէյ չէ թէ իր երեսփոխանական պարտուց մէջ անփոյթ ըլլալով ժողովէն բացակայ գտված է , այլ վասն զի երեք անգամ ալ ժամանակին եւ կանոնաւոր կերպով չ'է ընդունած ժողովին հրաւիրողները . հետեւապէս իրաց այս վիճակին առջեւ Ընտրողական ժողովն արդարացի չ'էր համարիր

անոր հրաժարումը եւ կը ծանուցնէր որ երբ կրկին ընտրութիւն մ'ալ ըլլայ , դարձեալ Թորոս պէյ պիտի կոչվի երեսփոխանական պաշտօնին :

Երկրորդ՝ Մայր Եկեղեցւոյ եւ Կէտիկ Բաշայի միացեալ թաղից մէջ երեսփոխանական նոր ընտրութիւններ կատարված ըլլալով Ընտրողական ժողովն շարքիւնքը կը տեղեկագրէր ի վաւերացումն :

Երրորդ՝ ազգային երեսփոխաններէն Կապուտիկեան Տ . Յովհաննէս Նպիսկոպոս հրաժեշտ կու տար իր պաշտօնէն , անձնական վատառողջութիւն պատճառելով :

Չորրորդ՝ նոյնպէս ազգային երեսփոխան Տ . Սահակ Քահանայ Միջագիւղի թէ՛ իր կրօնական պաշտամանց ծանրութեան եւ թէ՛ անձնական վատառողջութեան պատճառով , հրաժեշտ կու տար երեսփոխանական պաշտօնէն :

Հետեւապէս Ատենապետ էֆ . հրաւիրեց ըղ ժողովն որ իւր կարծիքն ու կամքը յայտնէ Քասրմ բաշայի Ընտրողական ժողովոյ յայտնէ գրքին վրայ :

ԱՅՎԱՏԵԱՆ ՄԱՏ. ԷՖ. — Ստոյգ է որ ժողովին հրախրագրաց անագան ուղարկվելը անպատեհութիւն մըն է, որ ակամայ բացակայութեանց տեղի կ'ուտայ: Մի եւ նոյն դէպքը ինծի ալ պատահեցաւ. այսօրեայ նիստին հրախրագիրը երէկ իրիկուն ժամ 10 ին գրասենեակս բերեր էին մեկնելու ետքը, եւ զանի այսօր հագիւ կրցայ ստանալ, մինչդեռ Աստուծոյ ղրուածութիւնը կը տրամադրէ որ ժողովին գումարումը սահմանեալ ժամանակէն ութ օր առաջ ծանուցվի ժողովականաց: Այս մասին մէջ զանցառութիւն մը կ'երեւի, եւ ըստ իս ամենէն կարուկ միջոցն է զայն բաժնաւոր հրաւերը լրագրաց միջոցով հրատարակել կանխաւ առանց յատուկ հրախրագրի:

ՓԱՓԱՋԵԱՆ Ս. ԷՖ. — Այս անգամի գումարումը եւ ոչ իսկ լրագրաց միջոցովը ծանուցվեցաւ, որու դէմ գանգատողներ կան:

Տ. ԵՐԵՄԻԱ ԵՊՍ. — Ես ալ այս նիստին հրախրագիր չ'ըստացայ, սակայն գիտէի թէ ժողով պիտի գումարվէր, ուստի վաղեմայի գալուտոյն պարագան Թորոս պէյին ալ կրնայ պատահած ըլլալ եւ զա որ ներկայութիւնն արգիւել: Առանց պակասութիւնը գտնելու եւ դարմանելու՝ անիրաւութիւն է երեսփոխան մը հրաժարեալ համարել թո՛ղ որ ընտրութեանց համար թաղական անտուկներն ալ մեծ ծախքեր ընելու կ'ըստիպվին:

ԱՏԵՆԱՊԵՆ ԷՖ. — Այս անպատեհութեանց չը կրկնվելուն համար Նախագահ Սրբազանը արդէն պէտք եղած հրամանը տուած է ցրտիչներուն:

ԵՆՈՍՈՒՅԵԱՆ Տ. ԷՖ. — Քանի մը նիստ առաջ երեք անգամ բացակայ գտվող երեսփոխանաց հրաժարման խնդրոյն վրայ խօսիլ ուզեցի, բայց արգիւցեցայ: Իսկ հիմայ դէպքը իմ ընելու զիտօղութեանս հարկը յերեւան կը հանէ: Ժողովին այս մասին ըրած որոշումը թէ եւ իմ կարծիքիս հակառակ՝ սակայն յարգելով զայն կը գիտեմ որ միայն մէկ պակասութիւն մը կայ. այն է երեք անգամէն ետքը մէկէն ի մէկ հրաժարեալ հրատարակելը, վասն զի կրնայ ըլլալ որ այսպէս հրախրագիր ընդունած չ'ըլլայ, կամ հիւանդ ըլլայ եւ զասի ժողովին ծանուցնելու անկարող. ուստի հարկ է որ երեք նիստի բացակայ գտվող երեսփոխանը հրաժարեալ չը հրատարակած՝ Նախագահ Սրբազանը անգամ մը ըննէ եւ ստուգէ բացակայութեան պատճառը, եւ չորրորդ նիստին մէջ անոր հրաժարումը որոշվի: Փորձը կը հաստատէ թէ այն

տեսակ պատճառներ կրնան ըլլալ, ինչպէս պատահած է երեսփա Սրբազանին, Թորոս պէյին եւ Այվասեան էֆ. ին:

ՓԱՓԱՋԵԱՆ Ս. ԷՖ. — Երեք անգամ բացակայ գտվող երեսփոխանաց հրաժարման խնդրին որոշված օրը քաջ կը յիշեմ որ Նախագահ Սրբազանը Գիւանին առաջարկեց որ երկրորդ բացակայութեան ցանկը հաղորդվի իրեն, որպէս զի ինքն ալ առանձին նամակով բանակցի բացակայ երեսփոխանին հետ, եւ այս տեսակ պատճառ մը՝ եթէ կայ, ստուգէ: Գիւանը կըրնայ ի գործ դնել Սրբազան Նախագահին առաջարկած այս միջոցը: Սակայն լրագիրները երբ ասին անգամ ժողովին գումարման օրը կը ծանուցեն՝ ի բաց առեալ այսօրեայ նիստը, ո՛վ կրնայ երեւակայել թէ Թորոս պէյ որ Պօլսի մէջ կը գտվի, լրագիր չը կարգաւորվ չիմանայ նաեւ ժողովին նիստը: Իսկ այս անգամի հրաւիրագրաց ուչ զրկվելու պատճառն ի մօտոյ գիտնալով կը յայտնեմ թէ՛ Գիւանը ատենադրութեանց տպագրութեան սպասեց, որպէս զի հրախրագիր եւ ատենադրութիւն միանգամայն հաղորդէ երեսփոխանաց:

Ժողովը Քասրմ բաշայի Ընտրողական ժողովին յայտագրին վրայ Գիւանի Թորոս պէյի բացակայութեան պատճառն ընդունելի գտնելով հրատարակեց որ հրաժարեալ չը համարիր զանի:

Ատենապետ էֆ. յայտնեց թէ երկրորդ բացակայութեանց ցանկը Գիւանն ամեն անգամ կը հաղորդէ Նախագահ Սրբազանին, որպէս զի Նորին Սրբազանութիւնը վերջին անգամ բանակցի բացակայ երեսփոխանաց հետ:

Մայր Եկեղեցի եւ Կէտիկ Բաշա միացեալ թաղից Ընտրողական ժողովին տեղեկագիրն ուղղակի բերված ըլլալով Գիւանին, Ատենապետ էֆ. զանի ետ կը դարձնէ, որպէս զի Ընտրութեանց Յանձնախումբին կողմէն կանոնաւորապէս գայ Ընդհանուր ժողովին:

Յետոյ Ատենապետ էֆ. Կապուտիկեան Տ. Յովնանէս Եպիսկոպոսի եւ Միջագիւղի Տ. Սահակ Քահանայի հրաժարականին վրայ ժողովին կարծիքը կը հարցնէ. ո՛չ ոք զիտօղութիւն կ'ընէ, հետեւապէս քըւէի զրկելով ընդհանուր հաւանութեամբ կ'ընդունվին այս երկու հրաժարականը:

1. ԱՏԵՆԱՊԵՆ ԷՖ. Ժ. Ժ. Ժ. Ժ. ԵՒ ԺԲ. ՆԻՍՏԵՐՈՒՆ

Արդէն նախորդեց նիստին մէջ Ը. եւ Թ. նիստերու ատենադրութիւնները ժողովին գիտօղութեան ենթարկված էին, սակայն մեծադոյն մաս ներկայ չ'ըլլալով, ընդունելութիւնը ներկայ նիստին թողված էր:

Վերստին ո՛չ ոք զիտօղութիւն ըրաւ, եւ ժողովն ընդունելով վաւերացուց նոյն երկու ատենադրութիւնները:

Իսկ նշանակեալ միւս ատենադրութիւնները ըստ որում երեսփոխանաց ոմանց ձեռքը անագան հասած էր, իւթիւնեան եւ Մազլըմեան էֆ.ներու զիտօղութեանց վրայ անոնց ընդունելութիւնը յաջորդ նիստին մնաց:

2. ԳԻՒԱՆԱԿԱՆ ԲԱՐԵԿԱՐԳՈՒԹԻՒՆ

ՄԵՐԵՄ-ԳՈՒԼԻ Տ. ԷՖ. — Նախընթաց նիստին Գիւանի անդամներէն երեք անձանց, որոց երկուքը Ատենապետը, միանգամայն բացակայութիւնը՝ անհաճոյ տպաւորութիւն մ'ըրաւ ժողովին վրայ, վասն զի ատեան բանալու համար նախ անոնց գալուն ակնկալելով եւ ետքն ալ առժամանակեայ Ատենապետ մը կարգելու գաղտնի ըրաւական ատեն կորսնցուցուց: Այս խմբովին բացակայութիւնը թէեւ անակնկալ եւ հաղուադէպ, ժողովին ընդհանուր կարծիքն եղաւ զանի նկատօղութեան առնուլ եւ ատեան բանալու համար այս օրինակ գէպերէ յառաջ գայիք արդեւքը բաժնալ: Հետեւապէս այս խնդիրը գիւանական բարեկարգութիւն անունով խնդրոյ կարգն անցաւ, որպէս զի ժողովն այսօրեայ նիստին մէջ իւր արտօնութիւնն ու որոշումն ընէ այս մասին:

ԱՅՎԱՏԵԱՆ ՄԱՏ. ԷՖ. — Ինչպէս ժողովն օրինադրեց որ երբ երեսփոխան մը յաջորդարար երեք անգամ բացակայ գտվի, հրաժարեալ համարվի: Կատարարիւմ որ նոյնպէս Գիւանի անգամաց համար ալ կանոն մը սահմանվի, որ երբ Ատենապետն ու փոխանորդը ինչպէս նաեւ Ատենադպիրն ու փոխանորդը միանգամայն բացակայ գտվին, հրաժարեալ համարվին պաշտօնէ: Արդէն այն նպատակով երկերկու ատենապետ ու ատենադպիր զրկած են, որպէս զի բացակայութեանց պարագաներու մէջ յաջորդեն իրարու, ուստի անարդարանալի պակասութիւն մըն է ատենց ամենուն մէկէն բացակայ գտվիլ:

ՄԱԶԼԸՄԵԱՆ Տ. ԷՖ. — Ուրիշ անգամ մ'ալ պատահեցաւ որ երկու Ատենապետները միանգամայն բացակայ գտվեցան ժողովին, մէկը հիւանդ էր եւ նամակով կը ծանուցնէր, իսկ միւսին բացակայութեան պատճառը մինչեւ ատեն անի գոյվելուն ժամը անծանօթ էր ժողովին, բայց հետագրական նամակ մը անագան ուրեմն ծանուց նոյնպէս անոր հիւանդութիւնն ալ:

Ըստ իս քանի որ կրնայ պատահիլ որ այսպէս երկուքն ալ հիւանդանան, կամ չը գալու ներքի պատճառ մ'ունենան, աւելի աղէկ է փոխանակ Գիւանի անգամաց այս օրինակ բացակայութիւնները հրաժարում համարելու, երկուքի տեղ չորս ատենապետ եւ չորս ատենադպիր ունենալ:

Տ. ԵՐԵՄԻԱ ԵՊՍ. — Ես ալ Մազլըմեան էֆ.ի պէս կը խորհիմ եւ կ'առաջարկեմ որ Ատենապետ ու Ատենադպիր երկերկու փոխանորդ ունենան, որով Գիւանը վեց անգամէ կը բաղկանայ: Այս անօրինութիւնը կրնայ ընել ժողովը, վասն զի Սահմանադրութեան մէջ դասի արգիւցող պատճառ մը չը կայ:

ՓԱՓԱՋԵԱՆ Ս. ԷՖ. — Այս առաջարկութիւնները կը նշանակեն թէ պահեստի Գիւան մը պիտի ունենանք, բայց եթէ ան ալ չը գայ, ի՞նչ ընելու է. խնդրին այս վիճակին վրայ Գիւանը թող բացատրութիւն տայ մեզի:

ԱՅՎԱՏԵԱՆ ՄԱՏ. ԷՖ. — Գիւանը թէ՛ վեց թէ՛ ութ անգամէ բաղկանայ, չը կրնար իմ առաջարկութեանս կարեւորութիւնը ջնջվիլ, վասն զի անոնց թրական բաղժութիւնը չ'արգիւցի իրենց բացակայութիւնը. օրէնքը միայն այս գործը կրնայ տեսնել: Երեսփոխանը երկու անգամ բացակայ գտվելու արտօնութիւն ունին, վասն զի անոնք իրենց տեղ չ'են կրնար ուրիշը զրկել ժողովին. բայց Գիւանի անգամը քանի որ փոխանորդներ ունին, եւ կրնան բացակայութեան ատեն իրարու փոխանակել, այնպէս է որ երբ Ատենապետն ու փոխանորդը Ատենադպիրն ու փոխանորդը միանգամայն բացակայ գտվին, հրաժարեալ համարվին: Ատենական կանոնաց խմբագրութեան ատեն կըրնայ Գիւանի անգամաց թիւը յաւելնալ եթէ հարկ է, բայց այժմէն պէտք է իբր ամենէն հարկաւոր խնդիր՝ իմ առաջարկութիւնս որոշել, որով միայն հարին է յանձնարակի կրկնված այս անպատեհութեանց բարձու մը:

ԻՌԹԻՆՅԵԱՆ Կ. ԷՖ. — Երբ ժողովը երեք ատենապետ եւ երեք ատենադպիր ունենայ խիստ դժար պատահելի պարագայ մըն է որ ամենքը

մէկէն պակտին . Երեմիա Սրբազանի առաջարկութեան համաձայն Ղիւանի անդամոց թիւը այս եղանակով աւելնալով բացակայութեանց առջեւը կ'առնովի հաւանօրէն , բայց Ղիւանը վեց անդամէ բաղկացեալ ըլլալէ ետքը՝ եթէ պատահի որ դարձեալ ամենքը մէկէն չը գան որ անհնար է , ըսել է Ղիւանի անդամը միաբաներ են ազգին գործին մնաս մը հասցնելու զխուսով , զխուսով մը՝ որ անյուսալի է Ղիւանէն : Այլատեան էֆ.ի առաջարկութիւնը այս իմաստն ունի եւ Ղիւանին վրայ դաւադրութեան կասկած կ'ենթադրէ :

ԱՅՎԱՏԵԱՆ ՄԱՍ. ԷՖ. — Իմ առաջարկութեան երբէք իւթիւճեան էֆ.ի հանած հետեւութիւնը չ'եղնէր . Ղիւանի անդամը կրնան բացակայ գտովի չէ թէ ժողովին թշնամանք մ'ընելու , անոր դէմ դաւ մը նիւթելու համար , այլ վասն զի իբր մարդ՝ կրնայ պատահիլ որ ծուլութեամբ կամ գործով չը գան ժողովին : Ես ամենայն պարզութեամբ բացակայութեանց առջեւն առնելու մտօք այս առաջարկութիւնն ըրի եւ կը հերքեմ այս տեսակ մեկնութիւն եւ իմաստ , որ կը տրվի անոր :

ԵՈՒՍՈՒՅԵԱՆ Տ. ԷՖ. — Այլատեան էֆ.ի առաջարկութեան անկեղծութեանը վրայ տարակոյս չը կայ բնաւ , եւ այս անկեղծութեան չը կրնար համաձայնիլ բնաւին Ղիւանի էֆ.ի մեկնութիւնը , զոր տուաւ անոր առաջարկութեան . բայց այս հետեւութիւնը որքան Այլատեան էֆ.ի նպատակէն հետի , նայնքան տրամաբանական կը կործնեմ , վասն զի դուն ուրեք կը պատահի որ ժողովը երեք ատենապետ ունենայ եւ երեքը միանգամայն բացակայ ըլլան . եւ այսպիսի պարագայի մէջ ինչո՞ւ Ընդհ. ժողովը չը կրնար ատենան բանալ երկրացուորի ատենապետութեամբը եւ գործել : Հետեւապէս այս խնդրոյն մէջ խիստ լաւագոյն կը գտնեմ Մազըմիան էֆ.ի եւ Երեմիա Սրբազանի կարծիքը՝ Ղիւանի անդամոց թիւն աւելցնելու մասին : Իրաւ է որ Սահմանադրութեան մէջ այս մասին բան մը գրված չ'է , բայց Սահմանադրութիւնը խմբագրողներուն մտքէն կ'անցնէ՞ր արդեօք թէ այնպիսի ժամանակ մը գայ որ Ընդհ. ժողովը նիստերը այսպէս շարաթնարով շարունակվին զրեթէ անընդհատ : Արդ՝ Ղիւանի անդամոց թիւն աւելցնելէն զատ ուրիշ միջոց մը չ'ունինք , եւ արդէն երեք անգամ յաջորդաբար բացակայ երեսօթիսանը Ղիւանի անդամ ըլլայ կամ ոչ , հրաժարեալ կը համարվի :

ՓԱՓԱՋԵԱՆ Ս. ԷՖ. — Երբէք պահեստի Ղիւան մը ունենալու հարկ չըկայ . Ղիւանը չորս անգամէ կը բաղկանայ , երկու Ատենապետները ներկայ չ'եղած ատեն երկու Ատենադպիրներն ալ ըստ կարգի կրնան ատենապետի պաշտօն վարել , վասն զի ատենադրութեանց խումբագրութեան պաշտօն չ'ունին ժողովի մէջ , զայն արդէն զիւանադպիրք կ'ընեն , եւ երբ այս չորսը մէկէն առանց հիւանդութեան պատճառի բացակայ գտվին , այն ատեն ամենը մէկէն հրաժարեալ կրնան համարվիլ :

ԽՕՃԱՍԱՐԵԱՆ Օ. ԷՖ. — Անցեալ նիստին երկու Ատենապետները միանգամայն բացակայ էին ժողովէն եւ ասկէ ծագեցաւ Ղիւանական բարեկարգութեան խնդիրը , զոր ժողովը կը յուզէ այսօր : Բայց ի՞նչպէս կարելի է ապահովել այս անպատեհութեանց բարձումը . ահա՛ խնդիրը որոյ մէջ ես սակաւ ինչ տարբեր կարծիք ունիմ ուրիշներէն : Ղիւանի անդամոց թիւը թէ՛ չորս ըլլայ թէ՛ ութը , քանի որ ատենական կանոն մը չըկայ որ պաշտօնին պարտաւորութիւնը սահմանէ , քանի որ պատասխանատուութեան սկզբունքը մեր ժողովներուն մէջ լուր բաւ մը , ստուեր մըն է , այս թըւական փոփոխութիւնները չ'են կրնար դարման բերել : Երեսօթիսան մը ամեն անգամ որ հրաւէր կ'ընդունի ժողովին ներկայանալու , գիտէ , իրեն ուղղված հրաւիրագրին մէջ կը կարդայ թէ երբ երեք անգամ բացակայ գտվի՞ առանց այս ինչ պատճառի , հրաժարեալ է . բայց Ղիւանի անգամները իրենց առանձին պաշտօնին համար սահմանված պարտաւորութիւն մը չ'ունին եւ պատասխանատուութիւն մը ստանձնած չ'են : Կ'ընդունիմ որ երկերկու փոխանորդ ունենան Ատենապետն ու Ատենադպիրը , բայց պէտք է ատենական կանոն մը սահմանել , որ պարտ դնէ Ղիւանի անդամոց վրայ որ դէթ մէկ Ատենապետ մը ու մէկ Ատենադպիր մը անպատճառ ներկայ գտվի ժողովին , եւ օր առաջ առաջին Ատենապետը եւ առաջին Ատենադպիրը իր պաշտօնակցաց հետ բանակցելով պարտաւոր ըլլան Նախագահ Սրբազանին յայտնել Ղիւանի այն անգամոց անունները , որք չ'ոյն օրուան նիստին ներկայ պիտի գտվին :

ՔԻԻՐՔՃԻՊԱՏԵԱՆ Բ. ԷՖ. — Ղիւանական բարեկարգութեան խնդրին վրայ այլ եւ այլ առաջարկութիւններ եղան , բայց նոյն իսկ Ղիւանը լուր կեցաւ . ուստի կը խնդրենք որ ինքն ալ իւր կարծիքը յայտնէ :

ԵՈՒՍՈՒՅԵԱՆ Տ. ԷՖ. — Կը տեսնեմ որ կարծ-

եաց մէջ հետզհետէ համաձայնութիւն կը հաստատովի , ուստի Սղաշէն էֆ. ի առաջարկութիւնը երկրորդելով կ'ըսեմ որ Ատենապետի՝ ու Ատենադպրի երկերկու փոխանորդներ տրվին , եւ Ղիւանի անգամները կանխաւ իրարու հետ բանակցելով իրենց մէջ որոշեն թէ նիստին օրը ո՞վ ներկայ պիտի գտվի . եւ այս որոշումը հաղորդեն Սրբազան Պատրիարքին :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Ներկայ խնդրին վրայ Ղիւանէն բացատրութիւն ուղղեցաւ , եւ ահա ես իբր ֆոխատենապետ կ'ուզեմ իմ մասին քանի մը խօսք ըսել :

Նախ՝ ես եւ ոչ մէկուն օգնականն եմ , եւ Ատենապետէն բնաւ տարբերութիւն չ'ունիմ , պաշտօնով ժողովին ֆոխատենապետն եմ , անոր քրէնօյն ընտրեալ : ժողովը բացակայ երեսօթիսանց հրաժարման համար օրէնք մը սահմանեց , օրէնք մը որ Սահմանադրութեանէն դուրս էր , եւ որու դէմ շատերը կը գանգատին , եւ չ'ուղիւղվ իրենց զիտօղութիւնները ներկայացընել ինծի գանգատալից նամակներ գրած են , բողոքարկու նամակներ զրկած են ինծի՝ չ'ուղիւղվ ուրիշ տեղ բողոքել այս օրինաց համեմատ . մինչդեռ իմ երկու անգամի բացակայութիւնս ներելի կրնայ ըլլալ եւ ահա հրաժարման ուրիշ օրէնք մ'ալ կ'ուզեն դնել , ես իմ մասին կը բողոքեմ Սահմանադրութեան հակառակօղ այն ամեն օրինաց դէմ , որք կայսերական հաւանութեամբ վաւերացված չ'են : Չեմ ընդունիր նաեւ որ Ղիւանի անգամները յատուկ զիտումով մը միաբանեմ՝ բացակայ գտվին ժողովէն . անցեալ անգամի նիստը կիրակի օրվան թողվելուն համար չը կրցայ ժողովին գալ , եւ այս պատճառս կանխաւ դարձեալ հոս ժողովին մէջ իմացուցած էի : Իսկ գալով այն առաջարկութեան որ կ'ուզէ Ղիւանին անդամոց վրայ նոր պարտաւորութիւններ դնել եւ պատասխանատուութիւն բեռնաւորել , կ'ըսեմ թէ երեսօթիսան մը ինչ պատասխանատուութիւն եւ ինչ արտօնութիւն որ ունի , նոյնն ունին եւ Ղիւանի անգամը , սնոնց պարտաւորութիւնն է միայն ժողովին որոշումները գործադրել , եւ երբ այս պարտուց դէմ մեղանչեն , այն ատեն պատասխանատուութեան տակ կ'ընկնին : Եթէ կ'ուզէք՝ ինծի եկած նամակներու իմաստը բացատրեմ ձեզի :

ԽՕՃԱՍԱՐԵԱՆ Օ. ԷՖ. — Ձեզի եկած նամակներուն իմաստին մէջ սպառնալիք կար , Կարդացէք այդ բողոքարկու նամակները , զա-

նոնք մենք տեսնել կ'ուզենք : ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Մասնաւորապէս ինծի ուղղված նամակներ են անոնք , չ'եմ կրնար ցուցընել , բայց իմաստը եւ եղած զիտօղութիւնները կրնամ ըսել :

ՄԱԶԻԸՄԵԱՆ Յ. ԷՖ. — Ատենապետ էֆ. իր խօսքերուն մէջ ըսաւ թէ՛ շատեր կը գանգատին եւ թէ չ'են ուզած իրենց զիտօղութիւնները ներկայացնել . միթէ՛ ժողովին չ'են ուզած ներկայացնել իրենց զիտօղութիւնը թէ այլուր , որոշակի հասկնանք . որպէս զի մարտ 20 ի վարչական պատահարը յունվար 15 ին չը կրկնվի :

ՓԱՓԱՋԵԱՆ Ս. ԷՖ. — Կը կրկնեմ որ կարգացվի նամակը , եղած ակնարկութիւնը ժողովին էութեան դէմ սպառնալից երեւոյթ մ'ունէր :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Մենք նոր օրէնքներ կարող չ'ենք դնել , քանի որ օրէնք մ'ունինք ի ձեռն , արդէն Ատենապետ էֆ. ին ալ այսօրմաստ գանգատական նամակներ գրված են , զոր յայտնեց նախորդ նիստի մը մէջ :

ՂԱԶԱՐՈՍԵԱՆ Ք. ԷՖ. — Ժողովը ուղեց որ երեք անգամ յաջորդաբար բացակայ գտվող երեսօթիսանը հրաժարեալ համարվի , մասնաւոր անձեր կը բողոքեն եղբր ասոր դէմ , անոնց բողոքը չը կրնար ժողովին որոշումը եղծել , եւ եթէ նամակներն ալ կարդաք , դարձեալ ազգեցութիւն մը չ'ընեն : Իսկ Ղիւանական բարեկարգութեան խնդրին գալով , երբ Ղիւանի անգամը ներկայ չը գտվին , ժողովը Սահմանադրութեան արամադրութեան համեմատ ատենաւոր կը բանայ , եւ միւս կողմէ Ղիւանի անգամը բացակայութեանց մասին ժողովին արդէն տուած որոշման ազդեցութիւնը կը կրեն : Աւստի նոր կանոն շինելով ի գուր ժամեր վատնելու հարկ չը կայ :

ՄԱԶԻԸՄԵԱՆ Յ. ԷՖ. — Ղիւանի բարեկարգութեան խնդրին տակէն նոր կանոն մը սահմանելու հարկը ծնաւ : Այլատեան էֆ. առաջարկեց որ՝ երբ Ատենապետն ու փոխանորդը միանգամայն բացակայ գտվին , պաշտօնէ հրաժարեալ համարվին . Խօճասարեան էֆ. Ղիւանի անգամոց պարտաւորութիւնը սահմանելու համար ատենական կանոնի մը հարկաւորութիւնը ծանոցը՝ չ'եմ հասկնար թէ ի՞նչու Ատենապետ Աղաբէկեան էֆ. ասոնց դէմ կ'առարկէ թէ Ընդհ. ժողովը չը կրնար նոր կանոն մը շինել , քանի որ ամենէն առաջ Աղաբէկեանի Յանձնախումբը՝ որոյ անգամ է նաեւ

Ազարէկեան էֆ. առաջարկեց որ ժողովը Մահ-
մանադրութեան ծրագրին թաղական մատա-
կարարութեան գլուխը վերաբնէ և գործադ-
րել սկսի. այս առաջարկութիւնը նոյն իսկ Ա-
տենապետ էֆ.ին ալ էր, և հիմա երբ Նիւա-
նի անդամոց կանոն մը գնելու կողմէ ինչո-
րը, փոյթ է, կը հերքէ ինչ որ սկզբունքով
ընդունած էր Արաքսի Յանձնախմբին հետ:
Նիւանի անդամոց թիւը յաւելուլ ատենական
կանոն սահմանել, երեք անգամ բացակայ ե-
զօղ երեսփոխանը հրաժարեալ համարել, այս
ամենը ներքին ատենական պարզ գործողու-
թիւններ են և չէ թէ կարեւոր օրէնսդրու-
թիւններ: Մանաւանդ որ պարտազանց երես-
փոխանաց գէժ թողովը այս հրաժարման
կանոնը սահմանեց, պատճառն այն էր որ ա-
նոնց երեսէն անգործութեան կը դատապարտ-
վէր ժողովը և կը մեղանշէր իւր սրբազան
պարտաւորութեան գէժ, իւր խղճմտանաց հա-
կառակ: Ճշմարիտ երեսփոխան մը, իւր պար-
տուց զգացումը կրօղ երեսփոխան մը, անհը-
նար է որ մէկ կողմէ իւր պաշտօնը չը կատա-
րէ, և միւս կողմէ սպառնայ ժողովին գէժ
իւր պարտազանցութիւնը արդէյի տակ զնե-
լուն համար: Եթէ այս տեսակ սպառնալիք մը
ընօրէն կան, նորէն կը կրկնենք և կ'աղա-
չենք նաև որ Ատենապետ էֆ. յայտնէ զա-
նոնք, որպէս զի ամեն սք զիմանց թէ ինչ տե-
սակ մարդոց չնորհիւ: Ազգը 1866 էն ի վեր կը
տատանի այս շփոթ վիճակին մէջ:

ԱՅՎԱՏԵԱՆ ՄԱՍ. էՖ. — Արքան իրարմ տար-
բեր պաշտօններ ստեղծվին, այնքան անոնց
ընտելեան յարակից տարբեր պարտաւորու-
թիւններ կը ծնին և կը ծանրանան պաշտօնա-
տարին վրայ:

Նիւանի անդամ մը իբր երեսփոխան ունե-
ցած պարտաւորութենէն զատ՝ ունի նաև իր
զիւանական պարտաւորութիւնները, կրկնակի
պարտաւորութիւններ, որոց և ոչ մէկը ժըլի-
ակ կարելի է: Կը հերքեմ ուրեմն Ազարէկեան
էֆ.ին այն կարծիքը թէ ինք լոկ երեսփոխանու-
կան պարտաւորութիւններ ունի մեղի հետ: Եւ
անա այս տեսութեամբ առաջարկեցի որ ինչ-
պէս երեք անգամի բացակայ երեսփոխանը հը-
րաժարեալ կը համարվի, նոյնպէս և իւր պաշ-
տօնին գլուխը չը գաղօղ Նիւանի անդամը հը-
րաժարեալ համարվի իւր զիւանական պաշ-
տօնէն:

Ջարմանք է թէ ինչպէս այն երեսփոխանը
որ չէ խղճեր իւր պարտուց գէժ գործելու, որ

անտարբերութեամբ բացակայ է գաղբը ժողո-
վի նիստերէն, ելեր կը բողոքէ իրեն համար
ժողովին դրած որոշման գէժ: Կը բողոքէ, որ-
պէս զի իրեն պէս պարտազանցները ազատ
ու արձակ արգելք յարուցնեն ժողովին ընթաց-
քին մէջ, մեծագոյն մաս չը դոյսնայ և Ազգին
կենսական գործերը չը ետալ մնան տարիներով:
Իմ առաջարկութիւնս՝ որոյ մէջ Նիւանին վե-
րադրված դաւադրութեան կասկածներ նշմա-
րեցին, խիստ պարզ էր և անկեղծ, ինչպէս
Նուսուֆեան էֆ. խոստովանեցաւ, և իրաւի
այդպիսի կասկած մը մարդու մաքէն չ'անցնի
Իսկ գաղով ատենական կանոնաց խնդրին, կը
հարցնեմ անոնց որ կ'ըսեն թէ ժողովը նոր կա-
նոններ չը կրնար գնել, կը հարցնեմ թէ ինչ
խնատ ունի հրաւիրագրաց մէջ սկիզբէն ի վեր
տեսված սա խօսքը, «ներքին կանոնադրու-
թիւնք ժողովին կամ ատենական կանոնք»:
Ինչ կը նշանակէ արդէն ժողովականաց հա-
զորդված այս կանոնաց ծրագիրը, որոյ մէջ Յի
հանված է Նիւանի անդամոց թիւը: Այս ծը-
րագիրը նոյն իսկ Ատենապետ էֆ. զրկած է,
իւր հաւանութեամբ շինված է, ինք որ առանց
կայսերական հաւանութեան արված մը և է
կանոն չ'ընդունիր, և Սահմանադրութիւնը
միայն կը ճանչէ: Եթէ իրօք կայսերական կա-
ռավարութեան կամաց գէժ է այդ տեսակ կա-
նոնադրութիւն մը, ինչու ուրեմն խնդրոց կար-
գին մէջ զրին դանի, ինչու ուրեմն զիտակ-
ցութեամբ այդ մեղքը մեղի գործել կ'ուտան:
Եթէ ժողովը դարանի մը մէջ ձգել կ'ուզեն.
թող Նիւանը ատոնց վրայ բացառութիւն տայ
և մեղ մանաւանդ այս շփոթ կացութենէն
գուրս հանէ: Վասն զի Երեսիա Սրբազանի և
Մաղլումեան էֆ.ի հետ իմ ըրած առաջարկու-
թիւնս ոչ այլ ինչ է, եթէ ոչ ատենական կա-
նոնաց յարակից խնդիր մը, ինչպէս է նաև
բացակայութեանց մասին ժողովին տուած ո-
րոշումը: Եթէ բան մը չը պիտի ըսվի, ուրեմն
գործերնիս շարունակենք, և պարագայ առը
ատեն չ'անցնենք:

ՓԱՓԱՋԵԱՆ Ս. էՖ. — Ատենապետ էֆ. ցու-
ցէք մեզ այն մարդը՝ որ բողոքոյ նամակներ
կ'ուղղէ, որ կ'ըստանայ Երեսփոխանական ժո-
ղովին էութեան գէժ: Նորս տարի առաջ ալ
մէկը նոյնպէս սպառնալիք մ'ըրաւ և գործադ-
րեց, Սահմանադրութիւնը անժամանակ վերա-
քննութեան դատապարտելով, պարագայ մը
որոյ վրայ զիտողութիւն ունենալով խնդրոց
կարգը անցաւ ի սկիզբան, բայց յետոյ ջնջվե-

ցաւ: Այդ սպառնացողին անունը կրնաք յայտ-
նել, վասն զի քանի որ երեք անգամ ժողովին
գալու հրաւեր կ'ընդունի, և չը գալով կը հը-
րաժարի ու կը բողոքէ, բնէ ի բրբ առ Ատե-
նապետ կը բողոքէ, ու չէ թէ առ բարեկա-
մբն: Տեսնենք մի է այդ մարդը որ կուզէ ըզ
ժողովը խախտել. քանի որ անոր վրայ ակ-
նարկութիւն ըրիք, ի հարկէ կարեւորութիւն
տուիք, ուստի յայտնեցէք մեղի, Ազգը թող
ճանչէ դանի զոր շատուց կը բնտար:

ՆՈՒՍՈՒՅԵԱՆ Տ. էՖ. — Մինչդեռ զիւանա-
կան բարեկարգութեան միջոցներուն վրայ կը
խորհէինք և քըւէարկութեան ժամը հասեր
էր արդէն, և անա շեղեցանք խնդրէն: Ար-
դէն որոշված խնդիր մը, բացակայ երեսփոխա-
նաց հրաժարման խնդիրը, նորէն երեսան կ'ել-
նէ, այս որոշման հակակարծիք մարդոց բողո-
քողներն յիշվելով: Այս առաջարկութիւնը
խնդրան ներկայացած ատեն ևս ալ համաձայն
չ'էի, բայց երբ ժողովն ընդունեց, ալ իմ
մասնաւոր կարծիքս անոր որոշման անջեւ կը-
չիւ չ'ունի, ուստի կը յարգեմ դայն և կը
համակերպվիմ անոր, ինչպէս ամեն ժողովակա-
նի պարտքն է այս: Մանաւոր անձինք ազատ
են ժողովին որոշումը քննադատելու և գի-
տողութիւններ ընելու, բայց մեր պարտքը չէ
զանոնք նկատողութեան առնուլ, եթէ կոյ և
երեսփոխան մը որ իւր դադարման գէժ կը բո-
ղոքէ, թող օրինաւորութեամբ ժողովին բերէ
իւր բողոքը, Կարծեմ Ատենապետ էֆ. իսկ
պէտք չ'էր որ իւր բողոքին մէջ այսպիսի բա-
ցաթիկ պարագայ մ'ախնարկէր, բայց մասնա-
ւոր կերպով յիշեց դայն, և ժողովին ալ չը
վերաբերիր իբրև ոստիկանութեան ատեսան
բնադատել զինքը որ իրեն դանդաղապետ
նամակ գրողին անունը անպատճառ յայտնէ
մեղի, որ թերևս մտերմաբար վարվեր է, ու-
րիշ խնդիր է՝ երբ երեսփոխանք խնդիրը նորէն
վիճարանութեան ենթարկելու պէն, այն ատեն
առաջարկութիւն մը կը բերեն և ժողովը և-
թէ ուզէ կ'ընդունի: Եթէ ամեն նիստի մէջ
այսպէս մէկ խնդրէն միւսն անցնինք, այն ա-
տեն անկարելի է գործ յառաջ տանիլ. ուստի
զառնանք բուն խնդրին, մէկգի թողով այս
զարտուղութիւնները:

Թէ Այվատեան էֆ.ի առաջարկութիւնը և
թէ ուրիշներունը երբէք նոր օրէնք մը չեն
ենթադրեր և Սահմանադրութեան չը հակա-
ռակիր. կ'աղաչեմ որ ժողովը անմիջապէս նը-
կատողութեան տանու և քըւէի գնէ: Եթէ

Ատենապետ էֆ.ի եկած բողոքագրաց խնդիրը
յուզել և վիճարանութեան սակ ձգել ուղղ-
ներ կան, պէտք է որ այս երկու կէտերն ի-
րարմէ զատվին, և արտաքոյ կարգի նոյն խըն-
դիրը ուրիշ նիստի մնայ: Գուրբ շատ խօսք
և տարաձայնութիւն կրնան յարուցնել այս
մասին, բայց մինչեւ ցարդ ժողովին եկած
պաշտօնական բողոք մը չը կայ. կը հետեւի
ուրեմն թէ իւր բրածը օրինաւոր է: Կարելի
բան չէ որ աշխարհիս մէջ խնդրի մը վրայ ա-
մենքն ալ իրարու համակարծիք ըլլան, բայց
անի որ օրինաւոր փաստեր ունի, թող բերէ
ժողովին յայտնէ:

ԱՏԵՆԱՊԵՏ էՖ. — Կը հարցնեմ ժողովին թէ
կ'ուզէ այս վիճարանութիւնը շարունակել թէ
ոչ:

ԽՕՃԱՍԱՐԵԱՆ Օ. էՖ. — Այնպիսի խնդիր մը
յարուցիք, որոյ վրայ ստիպված ենք խօսե-
լու:

ԻԲԼԻՔԵԱՆ Է. էՖ. — Խօսքը իմն է:

ՓԱՓԱՋԵԱՆ Ս. էՖ. — Պէտք է վիճարանու-
թիւնը շարունակել:

ՆՈՒՍՈՒՅԵԱՆ Տ. էՖ. — Բայց սա կէտը քըւէն
կրնայ որոշել:

ՆԱԵԱԳԱԷ ՍՐԲԱՋԱՆ — Յաւօք սրտի կը նը-
կատեմ, և ինծի հետ նաև հանդիսատես ժո-
ղովուրդն ալ կը նկատէ ու սրտովին կը ցաւի
որ գործնական ընթացք մը բռնելէ հետի
ենք գեւ, որոյ պէտքն զգալի եղած է: Այս
գործնական ճամբայ մը պէտք է մեղի, գէթ
որչափ ներքէ մեր կարողութիւնը: Եթէ Եւրո-
պական ազգերու շախ ուղղութեամբ չէ կա-
րելի քայլել, այսքան ալ ներքի չէ շեղիլ:
Ամենքս ալ Մովսէսի պէս մինայի գաղաթը
եղնելով, կ'ուզենք նորանոր օրէնքներ գնել,
բայց չ'ենք նկատեր թէ Հայոց ազգը օրէնքներ
կրելու ինչ աստիճան կարողութիւն ունի: Այ-
վատեան էֆ. կը կարծէ որ Վնդ. ժողովը Նի-
ւանի անդամք թոշակաւոր զիւանապիւրներու
պէս են, բայց կը սխալի. ամեն պարագայի
մէջ չը կրնար բնէ անոնց, իջէք ձեր աթոռէն
և ձեր տեղը ուրիշ մը պիտի գնենք: Ենչու
այս աստիճան կը ծանրանաք Նիւանի անդա-
մոց վրայ, դուք որ զանոնք թախանձանօք
պաշտօնի կը բարձրացնէք. Օտեսան էֆ. այսօր
ալ վազն ալ բացակայ գանվի և յայտնէ թէ
անկարող է պաշտօն տանելու, դարձեալ պատ-
ւով զինքը պաշտօնի կը կոչէք, և յետոյ ի
խաչ հան զդա, կ'աղաղակէք:

Կը խնդրեմ որ այս բժականագրութիւնները մէկ

կողմ դրվին, այս եղանակով գործ տեսնել կարելի չէ երբէք: Ար հրաւիրեմ ժողովը գործնական ճամբու մէջ մտնելու: Անդակ մը հրրատարակեցի, անոր մէջ ուշադրութեան արժանի կէտ մը կայ. ըսեր էի, ժողովուրդ՝ եթէ կ'ուզես որ քու ցաւերդ վերնան, քու բարձրացօն խտտապարանոցութիւնդ մէկ կողմ դիր. թերեւս իմ խօսքերս սահմանադրական Պատրիարքի խօսքեր չ'երևին, բայց ճշմարտոր խօսելով տակաւին ես ալ խտտապարանոց եմ եւ իմ եկեղեցականներս ալ դաստիարակութեան կարօտ: Անչպէս երբեմն Խորենացին ողբացեր է, թողէք որ ժողովուրդը դաստիարակվի, որով կրնայ խաղաղութիւնը պահպանվիլ եւ օրինաց լուծ հեշտին ըլլալ: Ահ, կը դիտեմ թէ ժամացոյցի սլաքը յառաջ կ'երթայ, մի կարծէք թէ Յեսուն եմ ես որ սլաքին հրամայեմ, այսպիսի հրաչքներ մի՛ սպասէք ինէ: Ժողովուրդը գոհ չ'է այս ընթացքէն վասն զի գործ չը տեսվիր. անցնի՛նք խնդրոց կարգին:

ՓԱՓԱՋԵԱՆ Ս. ԷՖ. — Ատենապետ էֆ. ըստականական նամակի ակնարկութիւն մ'ըբաւ, պէտք է որ նախ ետ առնու զայն, եւ նախադան Սրբազանն ալ երաշխաւորութիւն լտայ այս մասին:

ԵՌՍՈՒՅԵԱՆ Տ. ԷՖ. — Առաջարկեցի որ դիւանական բարեկարգութեան խնդրոյն առթիւ յարուցված այս միջանկեալ խնդիրը մէկ կողմ դրվի, վասն զի օրինաւորապէս եւ գրաւոր կերպիւ Ընդհ. ժողովին եկած չ'է եւ խնդրոց կարգէն դուրս է: Բայց եթէ ժողովը կ'ուզէ զայն անպատճառ յուզել, այսօր չը կրնար ընել, զի պէտք է նախ խնդրոց կարգն անցնի, եւ երկու խնդիրներն իրարմէ գատվին: Հիմայ պէտք է որ Նիւանին անդամները յաւելցնելու մասին եղած առաջարկութիւնը՝ որ քանիցս քիչ կամ շատ տարբերութեամբ կրկնվեցաւ, քրէի դրվի:

ԻՓԷՔՃԵԱՆ Հ. ԷՖ. — Ես ալ խօսք ուզեր եմ, եւ քանի անգամ է որ խօսելու կը արբամադրվիմ, բայց իրաւունքս կը բռնաբարվի: Ար բողոքեմ այս անկանոնութեանց դէմ, որ ժողովին պատիւ չեն բերեր հոս այս ներկայ ժողովրդեան առջեւ:

Ատենապետ էֆ. ժողովականաց ոմանց առաջարկութեան վրայ՝ քրէի կը հրաւիրէ ժողովը, հետեւապէս մեծագոյն մասամբ կ'որոշվի Նիւանական բարեկարգութեան խնդիրը

բացակայ երեսփոխանաց հրաժարման՝ նկատմամբ յուզված միջանկեալ խնդրէն անջատել եւ առանձինն լուծել զայն:

Այս որոշումէն ետքը՝ Ատենապետ էֆ. կը արամադրվի նաեւ Գ. ատենապետ մը եւ Գ. ատենապետի մ'ընտրելու առաջարկութիւնը նախ քրէի դնելու եւ հետզհետէ միւս առաջարկութիւնները, սակայն ոմանք խօսք կը խնդրեն եւ պահ մը եւս վիճարանութիւնը կը շարունակվի:

ՂԱԶԱՐՈՍԵԱՆ Խ. ԷՖ. — Ուրեմն նոյն իսկ Ս. Նախագահին նկատմամբ ալ հարկ է անօրինութիւն մ'ընել:

ԽՕՃԱՍԱՐԵԱՆ Օ. ԷՖ. — Հերիք չ'է միայն Նիւանի անդամոց թիւը յաւելուլ, այլ հարկ է նաեւ անոնց պարտաւորութիւններն ալ ուրոյն ուրոյն սահմանել եւ այնպէս որոշել որ ժողովը չը գումարած բանակցին իրարու հետ եւ կանխաւ իրենց մէջ կարգադրեն թէ՛ ո՞ր Ատենապետը եւ ո՞ր Ատենապետի յերկայ պիտի գտվի այս կամ այն նիստին, եւ զայս կարգադրութիւնը հաղորդեն Սրբազան Նախագահին:

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Այդ ամենը պարտադաներ են, եւ աւելորդ է իբր խնդիր յուզել:

ԱՅՎԱՏԵԱՆ ՄԱՏ. ԷՖ. — Ո՛չ, բացատրութիւնը մէկտեղ քրէի դրվելու է:

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Ար կրկնեմ թէ քեզի չէ կայ այդ բացատրութեանց:

ՂԱԶԱՐՈՍԵԱՆ Ք. ԷՖ. — Ար բողոքեմ՝ որ այսպէս չնչին խնդիրներու կը գոհնեք մեր թանկագին ժամերը, երբ անդին Աղգին կենսական խնդիրները կան, որոնք անօրէնսութեան եւ լուծման կը կարօտին:

ԻՓԷՔՃԵԱՆ Կ. ԷՖ. — Կրնայ միայն սա բացատրութիւնը աւելնալ թէ՛ Նիւանի անդամք կանխաւ բանակցին իրենց մէջ եւ ժողովին ներկայ դադելու անձերը որոշեն, որպէս զի ժողովը առանց Ատենապետի ու Ատենապետի երբէք չը մնայ:

ԱՅՎԱՏԵԱՆ ՄԱՏ. ԷՖ. — Քրէէարկութեան ժամուն անտեղի չ'եմ համարիր խնդրել Ատենապետ էֆ. էն որ բացատրէ մեզի թէ այս որոշման ենթարկվելու խնդիրը՝ առանկան կանոնաց կը վերաբերի՞ թէ չ'է, ժողովին ձեռնհասութեանէն դուրս է թէ չ'է, այս բացատրութիւնը հարկ է որպէս զի ետքը ասոր տակէն ալ խօսք չ'եղնէ:

ՂԱԶԱՐՈՍԵԱՆ Ք. ԷՖ. — Այդ բացատրութիւնը բողոքովն աւելորդ է. ժողովը իր ի-

րաւունքը եւ ձեռնհասութիւնը քաջ կը ճանչէ, եւ պէտք չ'ունի հրահանգ ընդունելու:

Ատենապետ էֆ. խնդիրը քրէի կը դնէ եւ ժողովը մէկ քրէի դէմ բացարձակ առաւելութեամբ կ'որոշէ Գ. ատենապետի եւ Գ. ատենապետի ընտրութիւնը: Այս պահուս նիստը կ'ընդհատի եւ քառօրէ մը ետքը՝ ատենը բացվելով կը շարունակէ:

ԽՕՃԱՍԱՐԵԱՆ Թ. ԷՖ. — Խնդրոց կարգին չ'անցած՝ պէտք է որոշել թէ երբ պիտի կատարվի Նիւանի յաւելեալ անդամոց ընտրութիւնը: **ԻՓԷՔՃԵԱՆ Կ. ԷՖ.** — Կ'առաջարկեմ որ յաջորդ նիստին կատարվի ընտրութիւնը, եւ իւրաքանչիւր երեսփոխան իր քրէն կանխապատրաստած բերէ ժողովին:

ԵՌՍՈՒՅԵԱՆ Տ. ԷՖ. — Եւ այս ալ խնդրոց կարգն անցնելով՝ ծանուցվի ժողովականաց: **Տ. ԵՐԵՄԻԱ ԵՊՍ.** — Քրէէթուղթ ալ պիտի ղրկվի՞ թէ միայն ազգարարութիւն պիտի ըլլայ:

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Հարկ է նաեւ կանխաւ որոշել թէ բացակայ երեսփոխանք երբ քրէնին նամակով ղրկեն, ընդունելի՞ է թէ ոչ:

ԽՕՃԱՍԱՐԵԱՆ Օ. ԷՖ. — Այն ընդունելի է:

ԵՌՍՈՒՅԵԱՆ Տ. ԷՖ. — Ես կը կարծեմ թէ ժողովարան չեկօղնեւուն քրէն ուղել գէշ դրութիւն մըն է, եւ այս մտք կ'ընեմ որ միայն կատարվիլը ընտրութիւնը ծանուցվի:

ԽՕՃԱՍԱՐԵԱՆ Օ. ԷՖ. — Մի եւ նոյն յանցանաց համար կրկնակի տուգանք պահանջել անիրաւութիւն է. բացակայութիւնը իւր սահմանն անցնելուն պէս հրաժարում կ'ենթադրէ, ուստի բացակային քրէն մերժելը անտեղի է:

ՂԱԶԱՐՈՍԵԱՆ Ք. ԷՖ. — Այս խօսքերն աւելորդ են, ով որ ընտրութեան կ'ուզէ մասնակցել, թող ներկայ գտվի:

ԽՕՃԱՍԱՐԵԱՆ Օ. ԷՖ. — Այս խօսքերն ալ մեզի համար աւելորդ են, բացակային քրէն մերժելու իրաւունք չ'ունիք ընտրութեան մասին:

Ատենապետ էֆ. խնդիրը քրէի կը դնէ եւ ժողովը չորս քրէի դէմ մեծագոյն մասամբ կ'որոշէ բացակայ երեսփոխանաց կողմէն ղրկված քրէներն ընդունելու պայմանով, Գ. Ատենապետի եւ Գ. Ատենապետի ընտրութիւնը յառաջիկայ նիստին կատարել, նշանակելով զայն խնդրոց կարգին մէջ:

Յ՞՞ ՎԵՐԱՔՆՆՈՒԹԻՒՆ ԱԱՀՄԱՆԱԳՐՈՒԹԵԱՆ

ՄԵՐԵՒՄ-ԳՈՒԼԻ Յ. ԷՖ. (Բ. Ատենապետի) — Ըստ որում նախընթաց նիստին ատենապետութիւնը դեռ եւս տպարանէն դուրս եկած եւ երեսփոխանաց հաղորդված չ'է, շատ մը երեսփոխանք՝ յորում ներկայ չ'էին, անտեղեակ մնացած են այնօրեայ վիճարանութեան արդիւնքէն: Ուստի այսօր Սահմանադրութեան վերաբրնութեան խնդիրը ժողովին ձեռք առնելու միջոցին, կարեւոր կը համարիմ նոյն նիստին մէջ սոյն խնդրոց վրայ երեւան եկած գլխաւոր զիտօղութեանց եւ առաջարկութեանց ամփոփութիւնը համառօտակի ներկայացնել, որով բացակայից տեղեկութիւն տուած եւ ներկայից ալ յիշողութիւնը նորոգած կ'ըլլամ:

Փափագեան էֆ. առաջարկեց որ նախ՝ Ընդհ. ժողովոյ օրէնսդիր մարմին մ'ըլլալը եւ ներքին խնդրոց կանոններն ի հարկին փոփոխելու հեղինակութիւն ունենալը քրէի դրվի որոշվի, հետեւապէս Սահմանադրութեան մէջէն սկզբունց վերաբերեալ յօդուածները միայն թողելով մնացեալները բարձրին, որպէս զի թէ՛ Սահմանադրութիւնն համառօտվելով վերաբրնութեան ու վաւերացման գործը դիւրանայ, եւ թէ՛ Ընդհ. ժողովն ապագային մէջ, պարագայից անյարմար գործադրական կանոններով, չարգելի գործելէ: Եւ իբր օրինակ ծրագիր մը մէջ բերաւ, գորմէ խօսած էր արդէն Ժ. Նիստին մէջ:

Այվատեան էֆ. դիտեց թէ՛ օրէնսդրական հեղինակութիւնը Ընդհ. ժողովին պաշտօնին ընտրութիւնն է, որ եւ Արաքննիչ Յանձնախումբին ծրագրին մէջ ճանչցված. թէ Ընդհ. ժողովն արդէն այն ծրագրին ընդունած է եւ վերաքննութիւնը անոր վրայ միայն կատարելու պարտաւոր:

Նոյն կարծիքն յայտնեցին նաեւ Երեմիա Սըրբազան եւ Մաղլըմեան էֆ.:

Քաղազեան էֆ. զիտօղութիւն ըբաւ թէ՛ երբ Ընդհ. ժողովն օրէնսդիր ժողով նկատվի, ուրիշ ժողովի մ'ալ հարկը կը ծնի, եւ ասով գործնական ճամբէ կը հեռանանք, եւ թէ՛ ազգային կատարութեան համար պարզ դրութեան մը պէտք է հետեւիլ:

Իւթիւճեան եւ Խօճասարեան էֆ.ները, իբր Վերաքննիչ Յանձնախումբի անդամ յայտարարեցին թէ՛ Յանձնախումբն իսկ փափաքած է Սահմանադրութեան յօդուածոց օրինական եւ

դործնականները զանազանել ու այս վերջինները Ընդհ. Ժողովոյ հեղինակութեան վերապահել, բայց գրեթէ անկարելի եղեր է իրեն զանոնք զատել եւ հակադրվեր է ծրագրին մէջ գրած բոլոր յօդուածները պահելու :

Խօսաարեան էՖ. առաջարկեց նաև որ եթէ ժողովն ընդ. արամադրութեանց վրայ վիճաբանութիւն ընել կ'ուզէ եւ կը բանայ, նախ Վերաքննիչ Յանձնախումբին տեղեկագրին համար տուած քրէն ետ առնէ, որ ծրագրին ընդհ. արամադրութեանց վրայ կը խօսելը ընդարձակորէն :

Այսպէս կամփոփին նախընթաց նիստին մէջ Սահմանադրութեան վերաքննութեան վրայ եղած գիտադուծիւնքն ու առաջարկութիւնքը, զորս ժողովին հաղորդելու պատիւ ունեցայ :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Սահմանադրութեան ընդհանուր արամադրութեանց վիճաբանութեան խնդրոց կարգ մը որոշելու համար Փափագեան էՖ. այսօր ալ գիտադուծիւններ բրած, եւ գտնանք գրաւոր ներկայացուցած է Նիւանին, ահաւասիկ գիտադուծիւնները :

« Ա. Երեսօրհանական ժողովը իբր օրէնագիր ժողով Վարչութեան ամեն ժողովոց եւ խորհրդոց օրինական ընթացքը դժէ, եւ Սահմանադրութեան մէջէն բարձրին այն մասերը որ Վարչութեան ընթացքին կը վերաբերին :

Բ. Եկեղեցական երեսօրհանաց ընտրութիւնք եկեղեցականաց միայն մասնաւորել, թէ եկեղեցական եւ աշխարհական խառն մասնակցիլ ընտրութեան :

Գ. Կրօնական եւ քաղաքական առանձին խորհուրդներ ունենալ թէ խառն :

Դ. Երեսօրհանութիւնք ժամանակի, թէ ամբողջ փոփոխել :

Ե. Ընտրելեաց ցանկ պէտք է թէ ոչ :

Զ. Երեսօրհանաց թիւը եւ բաշխման ձևը :

Է. Ընտրութեան եւ ընտրելութեան պայման :

Ը. Հակադուծիւն մը հակադէմ իշխանութիւն մը թաղական ժողովոց գիւաններէն, երեսօրհանութեան համար : »

Այս գիտադուծեանց հեղինակը կ'առաջարկէ որ ժողովն ասոնց վրայ վիճաբանէ :

ՆԱԽԱԳԱՆ ԱՐԲԱՋԱՆ — Յայտնի է թէ այդ գիտադուծեանց ամենքն ալ զատ զատ Սահմանադրութեան ծրագրին գլուխներուն հետ կապված են, ուստի վերաքննութեան միջոցին կարգը եւ տեղը եկած ատեն վիճաբանութեան կ'ենթարկվին. մը խնդրով չը գիտեմ զանոնք իրենց տեղէն

խախտել եւ այժմէն աւելորդ խնդիր յուզել կ'ուզին :

ԻՓԷՔՃԵԱՆ Է. ԷՖ. — Մինչդեռ նախորդ նիստի մը ժողովը Սահմանադրութեան ծրագրին ընդհանուր սկզբանց վրայ վիճաբանել որոշեց, կը դիտեմ որ դեռ եւս հրաւիրադրաց կցորդված խնդրոց կարգին մէջ, նոյն իսկ այս անգամ, « գլուխ թաղական մատակարարութեան » նշանակված է. միթէ Նիւանը օրոտա՞ծ է այս մասին, թող բացատրէ մեզի :

ՄԷՐԵՏԷՄ-ԳՈՒԼԻՍ ԷՖ. — Իփէքճեան էՖ. փակնարկած որոշումը վերջնութեւր նիստին մէջ տեղի ունեցաւ, որմէ ետքը տեսնելով թէ Ատենադրպիր էՖ. անցեալ նիստին խնդրոց կարգին մէջ « գլուխ թաղական մատակարարութեան » խօսքը պահած է եւ գիտադուծիւն չ'է եղած, հարկ էր եւ ինձի մի եւ նոյնը պահել ներկայ նիստին խնդրոց կարգին մէջ, թողով որ Ատենադրպիր էՖ. ինք մեկնէ այս պարագան երբ բացատրութիւն ուզի, որուն պատրաստ է միշտ :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Պիտի ըսեմ թէ Նիւանը այսպէս ընելով չ'է սխալած, այլ կատփոյն խնդրոց կարգին մէջ պահած է « գլուխ թաղական մատակարարութեան » խօսքը, եւ իրաւամբ վասըն զի ժողովը որքան որ կը յիշեմ, զայդ որոշումն ընելով իւր վերջնութեւր նիստին վեաին վայրկեաններուն մէջ, երբ գուցէ մեծագոյն մաս ալ չ'ունէր շատելն սրդէն մեկնած ըլլալով, ժողովը կ'ըսեմ գիտատարութիւն չ'ունէր խնդրոց կարգը փոխելու, ընդհանուր արամադրութեանց վրայ վիճաբանութիւն ընդունելով. յայտնեմ կարծիքս թէ ինչպէս . . .

ՓԱՓԱՋԵԱՆ Ս. ԷՖ. — Բրոշեալ խնդիր մըն է այդ, ատոր վրայ ներելի չ'է նորէն խօսիլ, կը բողոքեմ :

ԽՕՃԱՍՍԱՐԵԱՆ Օ. ԷՖ. — Հրաւիրադրաց վրայ քննադատութիւն պէտք է՞. անոնց վրայ չ'է խնդրել, Իրէքճեան էՖ. ի դիտել կու տամ որ խնդրը Սահմանադրութեան ընդհանուր արամադրութեանց վրայ է, հրաւիրադրաց վրայ խօսելու մասը չ'է :

ՂԱԶԱՐՈՍԵԱՆ Ք. ԷՖ. — Կը բողոքեմ, խնդրոց կարգէն կը շեղինք նորէն :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Եթէ մտիկ ընել չ'էինք ուզեր, պէտք է՞ր որ Նիւանէն բացատրութիւն ուղեիք խնդրոց կարգին եւ հրաւիրադրաց վրայ, այլ վիճաբանութիւններ յառաջ տանիլ ընդհանուր արամադրութեանց վրայ ինչպէս որ հասկցած էք. բայց քանի որ խնդիրը յարուցիք, զիս հարցաւորեցիք, հարկ է

որ խօսիմ. խօսելու կարգս չ'եմ տար ուրիշի : Կը յիշէք անշուշտ թէ նախ ժողովը իւր այս տարվան բացման Զ. նիստին մէջ Վերաքննիչ Յանձնախումբին տեղեկագրին վերջաբան առաջարկութիւնն ընդունելով ընդունած է նաև թաղական մատակարարութեան գլխէն սկսիլ վիճաբանութիւնը : Աւասիկ նոյն ատենադրութեան այն մասը որ ըսածիս կը վիայէ :

Կը կարգամ ՏՃ երեսին մէջ. « Ես չեմ պրնդեր թէ Յանձնախումբին առաջարկութիւնն ընդունելի ըլլայ, բայց կ'ուզեմ իմանալ թէ ժողովն անոր տեղեկագրին ընդունած է թէ մերժած. նախ եւ առաջ այս տեղեկագրին վերայ պէտք է տայ ժողովն իր կարծիքը, եւ ապա ուրիշ առաջարկութիւններ կարենան առաջ բերիլ » : Եւ դարձեալ ՏԾ երեսին մէջ կը կարգամ « Ատենապետ էՖ. քրէի կը գնէ Վերաքննիչ Յանձնախումբին տեղեկագրութեան բովանդակը եւ ժողովը մեծագոյն մասամբ կ'ընդունի : Դարձեալ քրէարկութեան կը գնէ տեղեկագրին վերջաբան առաջարկութիւնքը, որք նոյնպէս մեծագոյն մասամբ կ'ընդունի » :

Ասկէ կը հաստատովի որ ժողովը Յանձնախումբին առաջարկութիւնն ընդունած է. իսկ եթէ հիմա ետ առնալ կ'ուզէ իր ընդունելութիւնը, ինձի համար հոյ չ'է. միայն պէտք է որ իր քիտպիք ձանչէ եւ իր հակասականութիւնը խոստովանի : Եւ չեմ իցէ գաւանք ընդհանուր վիճաբանութեանց խնդրոց, որմէ երբէք խոյս առլ չ'եմ ուզած եւ զոր ոչ ոք ինչ եւել չ'է սիրած : Քանիցս անգամ խօսք բացվեցաւ այս մասին. ես լռեցի եւ սպասեցի հասկնալու համար թէ որո՞նք են այն գիտադուծիւնքը որ այս կէտին վրայ երեսան տի գան : Ոմանք հրատարակութեամբ, ոմանք ժողովին մէջ բանիւ թէ գրով այլեւայլ առաջարկութիւններ ըրին, բայց անսինք որ ատոնց եւ ոչ մէկն ալ ընդհանուր վիճաբանութեան կը վերաբերէին, այլ Յանձնախումբին ծրագրին ծաղկաբաղներն էին, նոյն եւ նման կամ գրեթէ անողպի տարբերութեամբ : Այն կէտերը որ անվիճելի են, օրէնք չ'են. զի օրէնքը միշտ փոփոխութեանց ենթակայ վիճաբանութեան տակ կ'ընկնի, այն անվիճելի սկզբունքները մեր ծրագրէն քաղվելով իբր օրէնք, իբր փոփոխութեան ընդունակ բաներ, յօդուածոց կարգը բերելը խօթեր են : Այսքան միայն այս կէտին վրայ, եւ ընդհանուր տեսութեան մէջ մանելու հարկ չը տեսնելով ամենեւին, կուզամ Փափագեան էՖ. ի առաջարկութեանց վերայ, զոր պահ մ'առաջ Ատենապետ էՖ. ընթացաւ հոս, եւ որ ըստ կարծեաց հեղինակին ընդհանուր արամադրութեանց վրայ իր բոլոր գիտադուծիւնքը կը բովանդակեն ու թ հատուածոց մէջ : Այս առաջարկութեանց առաջինը միայն որ օրէնք ալ չ'է, այլ Սահմանադրութեան խմբագրութեան ընթացքին վերաբերեալ կոտոր մը, կը վերաբերի ընդհանուր արամադրութեանց : Այս կէտին վրայ ինչպէս ըսեր է արդէն Եւթիւճեան էՖ. միաձայն էր Վերաքննիչ Յանձնախումբին կարծիքը, եւ եթէ չ'եմ սխալիլ, մերոնցմէ դարձեալ գուրս ելած ու տարածված է այս կարծիքը, բայց անկարելի եղաւ որոշել գուրս ձգվելու յօդուածքը, ատանց վարչական շէնքին կաղմութեանը միասելու. այսու ամենայնիւ, առանձին յօդուածոց եւ գլխոց քննութեան ընթացքին մէջ կրնայ դարձեալ ժողովը նոյն գիտակէտն ալ աչռէ չը հետացնել : Գալով մնացած եօթ հատուածոց, պիտի ըսեմ որ ամենեւին կարեւորութիւն չ'ունին իբր ընդհանուր արամադրութիւն, եւ իբր այս արդէն հերքեալ են. կը ներէ մեծապատիւ հեղինակը որ չը պատասխանեմ, բարձրաչնորհ նախագահը արդէն ինձի համար խիստ լաւ պատասխանեց :

Ձեմ սրդեր սակայն որ անպատճառ Յանձնախումբին առաջարկութիւնն ընդունիլ, կը փափաքիմ մասնաւոր որ ընդհանուր վիճաբանութիւն մ'ըլլայ նախ ընդհանուր սկզբանց վրայ, որք քանի մը բառով Սահմանադրութեան գլուխը կ'երեսին. եւ երկրորդ իւրաքանչիւր գլխի ընդհանուր սկզբանց վրայ. ընդունելի է այս եւ ցանկալի, բայց եւ այսու ամենայնիւ կը պնդեմ թէ այս վիճաբանութիւնը չ'արդիւր որ յօդուածոց քննութիւնը թաղական գլխէն սկսի երբ որ ըլլայ : Եթէ կը կարծէք թէ ժողովն այս որոշումը փոխած ու հակասութեան մէջ ընկած է, կը պնդեմ թէ ոչ. այս գլխէն սկսելու փաստերը որոց համազված է ժողովը, երբէք վերստին յիշեալ ու վիճեալ չ'ըլլալով, ի՞նչպէս կրնաք հաւատալ թէ ժողովն իր այս որոշումը յետս կոչած է : Ես չ'եմ կրնար ուրիշ կերպ մտածել եւ ասկէ դուրս ոչինչ կրնամ հասկնալ. իսկ եթէ կը կարծէք թէ երկու հակասական որոշում բրած է, պէտք է որ ատոնց մէկը ետ առնու, որպէս զի կարենայ իր ընթացքը շարունակել այս խնդրին մէջ :

ՂԱԶԱՐՈՍԵԱՆ Ք. ԷՖ. — Ժողովը թաղական մատակարարութեան գլուխը ամենէն առաջ քըննել որոշած ատեն իր նպատակն այն էր որ

զայն անմիջապէս գործադրելու սկսի, բայց յետոյ մտածեց որ այս կարելի չէր, ինչպէս Ազարէկեան էֆ. ալ ըսաւ թէ Սահմանադրութենէն զատ կանոն մը չ'ենք կրնար գործադրել, ուստի որոշեց ընդհանուր վիճարանութիւն մը բանալ ծրագրին վրայ: Ստուգիւ Սահմանադրութեան մէջ այնպիսի մանր կանոններ դրված կը տեսնենք որ գործելու ատեն մեր ուժը կը ջլատեն, եւ ահա ասոր համար կ'ուզենք որ միայն ընդհանուր կանոնները խմբագրվին եւ դուրս թողվելով երկրորդական բաները ենթարկվին Բ. Կրան վաւերացմանը:

ԻՓԷՔՃԵԱՆ Է. ԷՖ. — Դիւանին հարցի թէ արդեօք հրաւիրագրաց մէջ գլուխ թաղական մատակարարութեան խօսքը սխալմամբ դրված է. Բուսինեան էֆ. ըսաւ իսկզբան թէ ժողովը այդպիսի որոշում մ'ըրած չէ, եւ վերջն ալ յարեց թէ ժողովը հակասական որոշումներ ըրած է, որոց մէկը պէտք է ետ առնու. ըսել է թէ որոշված է ընդհանուր վիճարանութիւնը, եւ բժախնդրութիւն չ'եմ սիրեր, եւ ժամանակին յարգը կը ճանչեմ, բայց Դիւանին պատասխանը գոհացուցիչ չէր, եւ պէտք է պարզ բացատրութիւն տայ մեզի:

ԱՏԵՆԱԳՊԻՐ ԷՖ. — Ժողովը կը վկայէ թէ իմ պատասխանս խիստ պարզ էր. Դիւանը դիտմամբ գրած է ըսի խնդրոց կարգը եւ չ'է թէ սխալմամբ. կարծեմ ասկէ անդին կարճ ու մեկին պատասխան չէր ըլլար. եւ ասկէ անդին ալ բացատրեցի թէ ինչպէս կ'ըմբռնէ խնդիրը եւ ինչպէս սխալած չը համարիր զինքը: Եթէ սխալում մը կայ չ'անի Զ. նիստին որոշման մէջ է եւ զայն որոշումն է որչառ առնվի կ'ըսեմ, մինչդեռ Իրէքճեան էֆ. կը կարծէ թէ վերջընթեր նիստին որոշման ետ առնվին է իմ պահանջածս. չէ, այդ չէ, այլ ասոր հակառակն է: Ար եւ ըլլայ այդ սխալումը, երբէք ժողովը իր որոշմամբը չ'է արդիւլած ընդհանուր վիճարանութիւնը՝ զոր մերժող չը կայ, եւ ես առաջինն եմ փափաքողներէն, եւ ասոր պացոյց՝ արդէն պատասխանեցի այն ամեն դիտութեանց որք իբր ընդհանուր տրամադրութիւն գրով ներկայացան Դիւանին, որոնք կարծեմ այնպէս հերքեալ են որ չ'են կրնար մնալ այս սեղանին վրայ. ուրիշ ընդհանուր դիտութիւններ կան նէ, անոնք նայինք, ո՛ւր են, թող զա՛ն յերեւան:

ՓՈՓԱՋԵԱՆ Ս. ԷՖ. — Յանձնախմբին ծրագրերը երբ ներկայացաւ, ժողովը անոր սկզբանց

վրայ ընդհանուր վիճարանութիւն մը բանալու տրամադրիչ չէր, բայց ետքը փորձն զգալի ըրաւ ասոր հարկը եւ ժողովը ընդունեց ընդհանուր վիճարանութիւնը, եւ Օտեան էֆ. ժողովին այս որոշման վրայ աւետեց թէ վերաքըննութեան գործը դիւրացած է. Բուսինեան էֆ. որ ներկայ էր, այս ամենը կատարված ատեն լռեց եւ հիմայ ժողովին որոշումը կ'ուզէ հերքել:

Ընդհանուր վիճարանութիւն պէտք է որ ըլլայ եւ այնուհետեւ մաս առ մաս ծրագրին զըլուխները նկատողութեան կ'առնվին. սակայն նոյն իսկ ծրագիրը ձապաղ է, եւ մենք կ'ուզենք որ կոկիկ ու ամփոփ Սահմանադրութիւն մ'ունենանք, որոց մէջ չը դրվին այն մասերը որք ուղղապէս մեր ներքին գործոց անկախութեան կը վերաբերին: Եւ ստուգիւ ի՛նչ հարկ այս տեսակ բաներով Սահմանադրութիւնը ծանրաբեռնել եւ խել մը խնդիրներու առջեւ կաշկանդեալ մնալ: Ինչ եւ է, հիմայ այս պարագայիս մէջ Դիւանը պարտաւոր է ընդհանուր վիճարանութիւն բառը անցնել խնդրոց կարգին մէջ, եւ ուրիշ անգամ այս տեսակ փոփոխութիւն մը չընել, որոց դէմ կը բողոքեմ:

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Ատեանին վերնալուս սահմանեալ ժամը հասած է արդէն, պէտք է այս կէտը պարզել, որպէս զի ըստ այնմ խնդրոց կարգը որոշվի: Ատենադպիր էֆ. իր օրինասիրութեամբը կը պնդէ թէ թաղական մատակարարութեան գլուխը վերնալու որոշում եղած չէ, մինչդեռ ուրիշները հակասական կ'ըսեն:

ԱՅՎԱՏԵԱՆ ՄԱՏ ԷՖ. — Վերջընթեր նիստին մէջ երբ թաղական մատակարարութեան զըլուխը վիճարանութեան ենթարկված էր, Օտեան էֆ. ինչ ինչ դիտողութեանց առջեւ յայտնեց թէ ընդհանուր վիճարանութիւն մը հարկաւոր էր եւ զանց եղած. ժողովը այս յայտարարութեան վրայ քըւէարկութեամբ որոշեց ընդհանուր վիճարանութիւն ընել ծրագրին վըրայ: Աւրեմն Բուսինեան էֆ. ի ըսածը ճիշդ չէ, Երբ Օտեան էֆ. զայդ առաջարկութիւնն ըրաւ, տրամադրվեցայ պատասխանելու, բայց իւր խորհրդոց վրայ մեծ համարում ունենալուս լռեցի եւ ես ալ ընդհանուր վիճարանութիւն ընդունեցի. բայց նախընթաց նիստին մէջ Օտեան էֆ. ներկայ չէր եւ ո՛չ Բուսինեան էֆ. անել ձամբու մը մէջ մտաւ խնդիրը եւ նոր ծրագիր մը երեւան ելաւ, որոց վրայ Յանձնա-

խումբին անդամոց ուշադրութիւնն արթնցուցի: Չանազան յօդուածոց այս կամ այն կերպ ըլլալուն վրայ էին եղած դիտողութիւնները, հսկող ժողով եւն. առաջարկվեցաւ, ասոնք ընդհ. տրամադրութեանց չ'էին վերաբերէր, շիմայ վիճարանութիւնը թէեւ ընդհանուր տրամադրութեան վրայ պիտի ըլլայ, բայց միջանկեալ կերպով որոշվեցաւ ասի, եւ նախկին որոշումը՝ որ թաղական մատակարարութեան գլխէն սկսեալ էր քննութիւնը, փոխված չէ եւ Բուսինեան էֆ. իրաւունք ունի զայն խընդրոց կարգին մէջ պահելու:

Իսկ Փափազեան էֆ. ի այսօրուան ներկայացուցած դիտողութեանց համար Նախագահ Արքազանն աղէկ ըսաւ թէ անոնք ամենն ալ ծրագրին մէջ իրենց մասնաւոր տեղն ունին եւ կարգը եկած ատեն կրնան յառաջ բերվիլ, ուստի ընդհանուր տրամադրութեան ամենեւին չ'են վերաբերիր, ինչպէս հաստատեց նաեւ Բուսինեան էֆ. ալ: Գալով ընդհանուր տրամադրութեանց՝ ես ալ խօսք ունիմ այս մասին, եւ թէ ատեանը տակաւին շարունակվի:

ԻՓԷՔՃԵԱՆ Է. ԷՖ. — Այլատեան էֆ. օխալ կը մեկնէ ընդհանուր վիճարանութեան մասին

ժողովին տուած որոշումը, ուստի պէտք է որ նոյն նիստի տեսնողութիւնը երեւան գայ, որ այս տարածայն կարծիքները վերջանան:

Ժողովը քըւէարկութեամբ կ'որոշէ՝ այսուհետեւ իւր նիստերը տասնընինգ օրն անդամ մը կազմել եւ լրագրաց միջոցաւ երեսփոխանաց կանխաւ ծանուցնել ժողովին գումարումը, առանց մասնաւոր հրաւիրագիրներ չ'ըրկելու:


Յաջորդ նիստին խնդրոց կարգը կը պատրաստվի հետեւեալ կերպով:

1. Ատենադրութիւնը նախընթաց նիստերուն.
2. Վաւերացումն ընտրութեանց նորընտիր երեսփոխանաց.
3. Ընտրութիւն Գ. Ատենապետի եւ Գ. Ատենադպրի Ընդհ. ժողովին.
4. Վերաքննութիւն Սահման. — Ընդհանուր տրամադրութիւնը.
5. Ներքին կանոնադրութիւն Ընդհ. ժողովին կամ Ատենական կանոնք:

Ատեանը վերցաւ ժամ 10:30ին:

ՓՈՒԱՏԵՆԱՊԵՏ
Ս. ԱՂԱԲԷԿԵԱՆ

ԱՏԵՆԱԳՊԻՐ
ՌՈՒՍԻՆԵԱՆ



Handwritten text in a cursive script, likely a list or index. The text is oriented vertically and appears to be a continuation from the reverse side of the page. It contains several lines of text, some of which are partially obscured by the binding of the book.

Handwritten text in a cursive script, likely a list or index. The text is oriented vertically and appears to be a continuation from the reverse side of the page. It contains several lines of text, some of which are partially obscured by the binding of the book.



Faint handwritten text at the bottom of the page, possibly a signature or a note.

ԳԻՆ 2 ՂՐՈՒՇ

ՍԵՓԱԿԱՆՈՒԹԻՒՆ ԱԶԳԱՅԻՆ ՍՆՏՈՒԿԻՆ

Կը ծախիլի ի Գիւանատան Պատրիարքարանի ի Ղալաթիա ,
եւ կը գտիլի ամեն գրավաճառաց քով եւ Եկեղեցեաց բանկալները :